ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

30 հունվարի 2019 թվականի N 14-Ա

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 226-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացրած աուդիտորական ուսումնասիրության արդյունքում կազմված հաշվետվությունը և «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Մնացականյանի բացատրությունը՝

կ ա ր գ ա դ ր ում ե մ.

Կազմակերպության կանոնադրությամբ վերապահված լիազորությունները, ինչպես նաև հանրակրթական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները ոչ պատշաճ իրականացնելու համար «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Մնացականյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

30.01.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ